

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COLLECTION OF JUDGMENTS

Edited by Alvina Gyulumyan

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ Դատավորների միության նախագահ
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

ԵՐԵՎԱՆ 2002

**Տպագրվում է ՀՀ Ղատավորների միության
խորհրդի որոշմամբ**

Խմբագիր

**ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Կարինե Բալայանը
Սոնա Հովհաննիսյանը
Վահե Ենգիբարյանը
Աննա Ղազարյանը

ՇՈՒԼԵՐ-ԶԳՐԱԳԵՆՆ ԸՆԴՂԵՄ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԳՈՐԾԸ

CASE OF SCHULER-ZGRAGGEN v. SWITZERLAND
(Գանգատ թիվ 17/1992/364/436)

Դատարանի
25 հունվարի 1995թ.
վճիռը

Ստրասբուրգ

Շուլեր-Զգրագենն ընդդեմ Շվեյցարիայի գործով,

Սարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Դատարանի A կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն՝ նիստ գումարելով որպես Պալատ, հետևյալ դատավորների կազմով. պրն Ռ. Բերնհարդտ, Նախագահ, պրն Ֆ. Գյոլքյուբլյու, պրն Բ. Ուոլշ, պրն Ս. Ռուսո, պրն Ա. Սպիլման, պրն Ի. Ֆոյգել, պրն Ա. Ն. Լոյզու, պրն Մ.Ա. Լոպես Ռոկա, պրն Լ. Վիլդհաբեր, նաև պրն Յ. Պետցոլդ, Գործող քարտուղար, 1994թ. մայիսի 25-ի, հոկտեմբերի 25-ի և 1995թ. հունվարի 25-ի դռնփակ խորհրդակցություններից հետո 1995թ. հունվարի 25-ին ընդունել է հետևյալ վճիռը:

ՎԱՐՈՒՅԹԸ ԵՎ ՓԱՍՏԵՐԸ

1. Գործը Դատարան է հանձնվել Սարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») և Շվեյցարիայի Համադաշնության կառավարության («Կառավարություն») կողմից 1992թ. մայիսի 25-ին և օգոստոսի 5-ին՝ Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում: Գործը հարուցվել է՝ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն 1988թ. դեկտեմբերի 29-ին Շվեյցարիայի դեմ Հանձնաժողով ներկայացված՝ Շվեյցարիայի քաղաքացի տկն Շուլեր-Զգրագենի գանգատի (թիվ 14518/89) հիման վրա:

2. 1993թ. հունիսի 24-ի վճռով («հիմնական վճիռ») Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ կապված 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, քանի որ Ապահովագրության դաշնային դատարանի կայացրած վճռի համար սոսկ հիմք է հանդիսացել այն ենթադրությունը, որ կանայք ծննդաբերությունից հետո թողնում են աշխատանքը, որի հետևանքով տեղի է ունեցել խտրականություն՝ միայն սեռային պատկանելության հատկանիշով. այդ խտրականությունը չուներ որևէ ողջամիտ և օբյեկտիվ արդարացում (Շարքեր Ա, թիվ 263, էջեր 20-22 և 24, 61-67-րդ կետեր և գործող դրույթների 5-րդ կետ):

Դատարանը սահմանել է, որ իր վճիռն ինքնին հանդիսանում է պատշաճ արդարացի բավարարում՝ վիճարկվող ոչ նյութական վնասի կապակցությամբ, և որ պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարեր 7,500 շվեյցարական ֆրանկ (CHF)՝ ի հատուցում դատական ծախքերի և ծախսերի (ibid., էջեր 22-24, 69-րդ և 76-րդ կետեր և գործող դրույթների 6-7-րդ կետեր):

3. Քանի որ նյութական վնասի կապակցությամբ 50-րդ հոդվածի կիրառման հարցի վերաբերյալ դեռ որոշում չէր կարող կայացվել, դրա լուծումը հետաձգվել էր հիմնական վճռով: Դատարանը հրավիրել էր Կառավարությանը և դիմողին ներկայացնել իրենց գրավոր բացատրությունները՝ վեցամսյա ժամկետում, և մասնավորապես տեղեկացնել Դատարանին իրենց միջև կայացած ցանկացած համաձայնության մասին (ibid., էջեր 23 և 24, 74-րդ կետ և եզրափակիչ մասի 8-րդ կետ):

4. 1994թ. ապրիլի 7-ին Կառավարության ներկայացուցիչը տեղեկացրել է Նախագահին, որ 1994թ. մարտի 24-ի վճռով Ապահովագրության դաշնային դատարանն ավարտել էր գործի նորոգված վարույթը, որն սկսվել էր Դատարանակազմության մասին դաշնային օրենքի 139a մասի համաձայն: Իր իսկ՝ 1988թ. հունիսի 21-ի վճիռը, ինչպես նաև Ուրիի կանտոնի Տարեցների, վետերանների և հաշմանդամների ապահովագրման հարցերով վերաքննիչ խորհրդի 1987թ. մայիսի 8-ի և Ուրիի կանտոնի Հաշմանդամների ապահովագրության հարցերով խորհրդի 1986թ. մարտի 21-ի որոշումները ճանաչվել են անվավեր և դիմողին՝ սկսած 1986թ. մայիսի 1-ից, հատկացվել է հաշմանդամության լրիվ կենսաթոշակ:

5. 1994թ. ապրիլի 17-ին դիմողի փաստաբանը տեղեկացրել է Քարտուղարին, որ դիմողը չի համարում, որ գործի վարույթը Շվեյցարիայում ավարտվել է, և որ նա, համաձայն Համադաշնության ապահովագրության մասին օրենքի 3-րդ կետի՝ 40,933.64 CHF չափով փոխհատուցում ստանալու պահանջ է ներկայացրել Ֆինանսների վարչություն:

6. 1994թ. մայիսի 25-ին Հանձնաժողովի քարտուղարությունը հայտնել է Քարտուղարին, որ Հանձնաժողովի պատվիրակը ցանկություն է հայտնել 50-րդ հոդվածի խնդրի լուծումը թողնել Դատարանի հայեցողությանը:

7. 1994թ. սեպտեմբերի 14-ին դիմողի ներկայացուցիչը Քարտուղարին ուղարկել է Դաշնային խորհրդի՝ 1994թ. հունիսի 12-ի որոշման պատճենը, որով փոխհատուցման վերաբերյալ զանգատը մերժվել էր: Նա խնդրել է, որ Դատարանը քննարկի դիմողի պահանջները բավարարելու հնարավորությունը, քանի որ Կառավարության հետ համաձայնությունը թվում է անհավանական:

8. Նախագահի կարգադրությունների հիման վրա Քարտուղարը խորհրդակցել է Կառավարության ներկայացուցչի և Հանձնաժողովի պատվիրակի հետ: 1994թ. հոկտեմբերի 12-ին ներկայացուցիչն ասել է, որ ինքը ոչինչ չունի ավելացնելու Դաշնային խորհրդի 1994թ. հունիսի 12-ի որոշմանը: Հաջորդ օրը պատվիրակը հայտնել է, որ այդ հարցի լուծումը թողնում է Դատարանի հայեցողությանը:

9. 1994թ. հոկտեմբերի 25-ին Դատարանը որոշել է, որ, ելնելով գործի հանգամանքներից, լսումներ անցկացնելու անհրաժեշտություն չկա:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

10. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կապակցությամբ.
«Եթե Դատարանը գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ այլ մարմնի կայացրած որոշումը լիովին կամ մասնակիորեն հակասում է ... Կոնվենցիայով սահմանված պարտականություններին, և եթե նշված կողմի ներպետական իրավունքը ընձեռում է միայն մասնակի փոխհատուցման հնարավորություն, Դատարանը՝ իր որոշմամբ, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին տրամադրում է արդարացի բավարարում»:

Ա. Դատավարության մասնակիցների բացատրությունները

11. Տկն Շուլեր-Չգրագենը պնդել է, որ նյութական վնասի փոխհատուցման խնդիրը վերջնական լուծում չի ստացել Ապահովագրության դաշնային դատարանի 1994թ. մարտի 24-ի վճռով, որով իր՝ լրիվ կենսաթոշակ ստանալու շարունակական իրավունքը ճանաչվել էր հետադարձ ուժով (տես վերը՝ 4-րդ կետ):

Նա ակնկալել է կենսաթոշակին որպես տոկոս ստանալ 40,933.64 CHF

հավելյալ գումար: Այդ թիվը նա ստացել է 5% տոկոսադրույք կիրառելով 1986թ. մայիսի 1-ից, երբ կենսաթոշակի վճարումը դադարեցվել էր Ուրիի կանտոնի Հաշմանդամների ապահովագրման խորհրդի կողմից, մինչև 1994թ. ապրիլի 20-ը, երբ կենսաթոշակի գծով (218,512 CHF) վճարվել է Շվեյցարիայի Մեքենամետաղամշակման արդյունաբերության փոխհատուցման գրասենյակի կողմից:

12. Հիմնվելով Կառավարության 1994թ. հունիսի 12-ի որոշման վրա (տես վերը՝ 7-րդ կետ)՝ Կառավարությունը դիմողի գանգատն ամբողջովին անհիմն է համարել:

Առանց պահանջելու, որ Դատարանը հետաձգի իր որոշման կայացումը, Կառավարությունը նշել է, որ Ապահովագրության դաշնային դատարանը հայտնել էր այդպիսի գանգատ ընդունելու իր ոչ իրավասու լինելու մասին՝ հայտարարելով, որ այն պետք է հատուկ վարույթի կարգով ներկայացվի ընդդեմ Ուրիի կանտոնի կամ Շվեյցարիայի Համադաշնության՝ դնելով

պետության

պատասխանատվության

հարցը:

Կառավարությունը պնդել է, որ տկն Շուլեր-Չգրագենի պահանջը պետք է գնահատվի՝ ելնելով միայն ներպետական օրենքներից, այն է՝ Համադաշնության, ինչպես նաև նրա իշխանության մարմինների և պաշտոնյաների պատասխանատվության մասին դաշնային օրենքից: 50-րդ հոդվածի կիրառումը տեղին կլիներ միայն այն դեպքում, եթե Ապահովագրության դաշնային դատարանը մերժեր խնդրո առարկա օրենքի հիման վրա դիմողի հարուցած վարչաիրավական հայցը:

Ավելին տվյալ գործում Կառավարությունը չէր կարող գտնել որևէ կապ տոկոսի վճարման կամ չվճարման և արդարացի բավարարման պահանջների միջև: Վերսկսելով գործի վարույթը և վերացնելով 1988թ. հունիսի 21-ի իր որոշումը (Շարքեր Ա, թիվ 263, էջեր 12-13, 29-րդ կետ), Ապահովագրության դաշնային դատարանը լիովին հատուցել է Ղատարանի արձանագրած՝ Կոնվենցիայի խախտումից բխող հետևանքների դիմաց. այդ խախտումն արդյունք էր սեռային պատկանելության հատկանիշով խտրականության, ինչը հետևանք էր այնպիսի ապացույցի օգտագործման և գնահատման, ինչը հիմք էր հանդիսացել ոչ թե հաշմանդամության կենսաթոշակից զրկելու, այլ իրավիճակը գնահատելու համար: Եթե տկն Շուլեր-Չգրագենի դիմումի նոր քննությունից հետո Ապահովագրության դաշնային դատարանը որոշի, որ դիմողն այդ կենսաթոշակն ստանալու իրավունք չունի, միևնույն է, խախտումը կհամարվեր վերացված:

Ի վերջո, Կառավարությունը նշել է, որ դիմողի նկատմամբ մոտեցումը եղել է նույնը, ինչ բոլոր այն անձանց, որոնց նշանակվել է կենսաթոշակ, և որոնց դատարանի որոշմամբ տրամադրվել են սոցիալական

ապահովագրության նպաստներ. տոկոս սովորաբար չի վճարվել նախկին կենսաթոշակների վճարման հետ մեկտեղ:

13. Հանձնաժողովի պատվիրակը հարցի լուծումը թողել է Դատարանի հայեցողությանը:

Բ. Դատարանի գնահատականը

14. Դատարանը հաշվի է առնում Դատարանակազմության մասին դաշնային օրենքի 139a մասի համաձայն՝ հիմնական վճռից հետո Ապահովագրության դաշնային դատարանում գործի նոր քննությունը, որի արդյունքում 1986թ. մայիսի 1-ից դիմողին տրամադրվել է լրիվ կենսաթոշակ: Նա մեծապես գնահատում է այդ դատարանի 1994թ. մարտի 24-ի վճռի կարևորությունը՝ Ստրասբուրգում կայացված վճիռների կատարման համար: Այդպիսով, Ապահովագրության դաշնային դատարանը ցույց է տվել իր հավատարմությունը Կոնվենցիային և Դատարանի նախադեպային իրավունքին (տե՛ս, *mutatis mutandis*, Բարբերան, Մեսեգուան և Խաբարդոն ընդդեմ Իսպանիայի 1994թ. հունիսի 13-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 285-C, էջ 56, 15-րդ կետ):

15. Միակ հարցը, որ պետք է որոշվի, տկն Շուլեր-Ջորագենի պահանջած՝ 1986թ. մայիսի 1-ից մինչև 1994թ. ապրիլի 20-ը ժամանակահատվածում իրեն տրամադրված հաշմանդամության կենսաթոշակին հավելյալ տոկոսների վճարման հարցն է:

Դատարանը կրկնում է, որ արդարացի բավարարումը պետք է տրամադրվի «անհրաժեշտության դեպքում», և որ այն փաստորեն կախում չունի որևէ ներպետական նորմից (տե՛ս, «Սանդի թայմս»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 38, էջ 9, 15-րդ կետ), այս դեպքում՝ Ապահովագրության դաշնային դատարանի՝ տոկոսների տրամադրման վերաբերյալ նախադեպային իրավունքից: Հետևաբար, նա գտնում է, որ Եվրոպական դատարանն իրավասու չէ վճիռ կայացնել՝ տվյալ գործով Ապահովագրության դաշնային դատարանի՝ Շվեյցարիայի օրենքներով կայացված՝ զանգատը մերժելու մասին որոշման վերաբերյալ: Բավական է այն, որ Ստրասբուրգի դատարանի վճռին հաջորդած դատավարության արդյունքում Ապահովագրության դաշնային դատարանը ճանաչել է լրիվ կենսաթոշակ ստանալու դիմողի իրավունքը, և հետադարձ ուժ

է տվել այդ ճանաչմանը: Այսպիսով, նա նպատակ է ունեցել հատուցելու Կոնվենցիայի խախտումից առաջացած վնասների դիմաց: Այնուամենայնիվ, նա հաշվի չէր առել անցած ժամանակահատվածը՝ ութ տարին: Հետևաբար, ըստ Կոնվենցիայի՝ արդարացի է նշված ժամանակահատվածի համար որոշ տոկոսներ հատկացնելը:

Սակայն Դատարանը չի ընդունում տկն Շուլեր-Ջորագենի առաջարկած ամփոփ հաշվարկը և հաշվարկի ոչ ճիշտ ձևը՝ մասնավորապես 5% տոկոսադրույքի կիրառման առումով:

Գնահատելով հավասարության հիմքով՝ 50-րդ հոդվածի համաձայն, Դատարանը դիմողին տրամադրում է 25,000 CHF մնացած նյութական վնասի դիմաց:

ԱՅՍ ՀԻՍՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Վճռում է՝ յոթ ձայնով ընդդեմ երկուսի, որ պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարի 25,000 (քսան հինգ հազար) շվեյցարական ֆրանկ՝ ի հատուցում նյութական վնասի,
2. Միաձայն մերժում է արդարացի բավարարման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, ծանուցված է գրավոր կարգով 1995թ. հունվարի 31-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 55-րդ կանոնի 2-րդ կետի 2-րդ ենթակետի:

Հերբերտ Պետցոլդ
Քարտուղար

Ռուդոլֆ Բերնհարդտ
Նախագահ

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 1-ին կետի և Դատարանի A կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում է պրն Բերնհարդտի և պրն Վիլդհաբերի չհամընկնող համատեղ կարծիքը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԲԵՐՆՀԱՐԴՏԻ ԵՎ ՎԻԼԴՀԱԲԵՐԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ՀԱՍՍԵՆԴ ԿԱՐԾԻՔԸ

Մենք դեմ ենք քվեարկել տոկոսներ հատկացնելու որոշմանը, քանի որ համոզված ենք, որ դիմողի շահերը պաշտպանելու համար լրիվ կենսաթոշակի տրամադրումն ու վճարումը բավարար հատուցում է, և որ հավելյալ տոկոսների վճարում հարկավոր չէ:

